

խանի սպասելու՝ Մաթիկը կը սահի նիւթէն՝ ինչպէս հաւաստումէն:

Ու քարոզ, քարոզ, քարոզ:

Պատմութիւն, ցեղեր, քաղաքներ, արկածներ՝ բոլորն ալ կը շահագործուին ապշեցուցիչ ճարտարութեամբ մը: Ուրիշներ իրենց գաղափարները կը փոխադրեն ուրիշներու, բառերով: Անիկա բառերը միջոց է ըրած իր երազները կեանքին հետ փոխարինելու: Հաւատքը տըժգոյն տարազ մըն է անոր հոգեբանութիւնը պատկերող: Անիկա իր գաղափարները կ'ապրի: Ու ամէն առիթ, յիշատակ, մտքի փշուր զինքը կը դնեն այդ այրումին մէջ, որ սեւեռեալ գաղափարը կը յատկանշէ: Ածխացած ադամանդ կտրած յեղափոխակա՛ն:

Բարեբախտաբար կը հասնի այծարածը:

Փորձ, եփուկ խոնարհութեամբ մը Ակօ աղբարը կը հրաւիրէ հիւրերը քարայր: Ո՛չ զարմանք, ո՛չ վախ: Նոր է, որ այսպէս ղարիբներ կը յանձնուին իր գաղտնիքին: Կ'աճապարեմ դառնալ գեղ, ուր անհետացումս կրնար տեղի տալ «թիւրիմացութեան», որ դիւանագիտական բառ մըն է նաեւ խուլ այս գեղին մէջ:

Երկու շաբաթ անոնք մնացին հոն, մինչեւ որ մաշեցաւ անոնց յանկարծական երեւումին եւ խրիմեանի քիչ մը կասկած հրաւիրող հեքիաթը: Դժուար, բայց հետագայ օրերով հաստատուած յեղում մը սրբագրեց վախերը իմ ու գեղապետին տղուն, որուն հայրը կ'անգիտանար ամէն բան: Լսեր էր ատոնց վիճաբանութենէն, խոռոզութեան, անխուսափելի խրիմեանէն, բայց յարեր էր ընդհանուր պատմումին, որ զանոնք Նիկիոյ չըջանէն աճալարարներ կը ներկայացնէր, մեկնած նոյն օրն իսկ, ըստ որում նոր օրէնք մը կ'արգիլէր անոնց գործել գեղերու մէջ. օրէնքը գաւառակի պէյին, խաբուած գէշ կերպով ճարտար առաւ-փախաւէ մը:

Երկու շաբաթ, գեղապետին տղուն հետ, Գէորգ աղա (տասը տարեկանին անիկա կը վայլեցնէր այդ տիտղոսը)